ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «09» նոյեմբերի 2015 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 34-Ա/Ք

ՅՈՒՐԻ ՀԱՅԿԻ ՇՈՒՔՈՒՐՅԱՆԻՆ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանով հաստատված «ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի պարգևների շնորհման կարգի» 2-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ կետերը և հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Հայկի Շուքուրյանի հիմնարար և կիրառական գիտությունների բնագավառում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումները, գիտական կադրերի պատրաստման և գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած ավանդն ու ներդրումները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Հայկի Շուքուրյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալ»:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ